ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

«Իրավաբանական Լրատուն» պարբերական է, որը նպաստում է արդի իրավական մշակույթի ձևավորմանը

Տպագրվում է 2006թ. հունիսից
2006 թվական
թիվ 1
հունիս

Այն պետությունը, որտեղ քաղաքացիներն ամենից ավելի են խոնարհվում օրենքներին, երջանիկ է խաղաղ ժամանակ և անխոցելի պատերազմի ժամանակ:

Սոկրատես

Սիրելի ընթերցող

Այսօրվանից Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան Ձեզ է ներկայացնում իր ամենամսյա իրավաբանական պարբերականը: Նախատեսվում է, որ այն կկատարի ՀՀ իրավաբանական դաշտի վերլուծության, մարդու իրավունքների պաշտպանության հարցերի, փաստաբանական և դատական համակարգերի խնդիրների վեր հանման ու լուծումների առաջարկման, այդ բնագավառներում վերլուծությունների կատարման, իրավաբանների կրթման և մասնագիտական էթիկայի քարոզման, ինչպես նաև միջազգային արդի իրավաբանական պրակտիկայի և փորձի ներկայացման գործառույթներ: Ակնկալվում է, որ իրավաբանական լրատուն իր անկախության և օբյեկտիվության շնորհիվ կդառնա իրավաբանների սեղանի սիրված մասնագիտական պարբերականը և կնպաստի ՀՀ արդարադատության համակարգի բարեփոխումների իրականացմանն ու իրավունքի գերակայության հաստատմանը:

ԼՐԱՀՈՍ

«ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2006թ.-ի 630 որոշումը՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը սահմանում է հասարակության և պետության օտարման հիմքը, կարգը և օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման տրման կարգը: Առաջարկությունները և կարծիքները կարող եք ուղղել qonnarkum@justice.am էլեկտրոնային փոստի հասցեով:

ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

08.06.2006թ.-ի ՀՀ արդարադատության խորհրդի նիստում ՀՀ նախագահի ներկայությամբ տեղի է ունեցել նորանշանակ դատավորների երդման արարողությունը:

Ստանձնելով դատավորի բարձր պաշտոնը՝ տնտեսական դատարանի դատավորներ Սամվել Գրիգորյանն ու Տարոն Նազարյանը, Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր Ալեքսանդր Ազարյանը, Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր Սամվել Թադևոսյանը, Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի դատավորներ Հարություն Ենոքյանն ու Հովհաննես Մելքոնյանը երդվել են արդարադատություն իրականացնելիս ենթարկվել միայն Սահմանադրությանը և օրենքներին, լինել անաչառ և սկզբունքային, արդարացի և մարդասեր, բարձր պահել պետության ու դատարանի հեղինակությունը:

Հանրապետության նախագահը, շնորհավորելով նորանշանակ դատավորներին, ասել է, որ նրանցից ակնկալում է ազնիվ, անաչառ ու սկզբունքային աշխատանք:

Արդարադատությունը բոլոր հասարակական առաքինությունների հիմքն է:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

(ՄԱՍ ԱՌԱՋԻՆ)

Փաստաբանությունը, հանդիսանալով մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն մեխանիզմներից մեկը, կարևոր դեր է խաղում ինչպես տվյալ երկրի դատաիրավական համակարգում, այնպես էլ հասարակական կյանքում: Անկախ և կենսունակ փաստաբանության համակարգից է նաև կախված մարդկանց հավատը դեպի տվյալ երկրի արդարադատության համակարգը և օրենքով պաշտպանված լինելու գիտակցումը: Անկախության, կենսունակության և իր բուն առաքելությանը առավելագույնս հետամուտ լինելու՝ փաստաբանության կարողությունը հատկապես կարևորվում է այն երկրներում, որտեղ չկան և չեն եղել իրավաբանի անկախ մասնագիտության, նրանց միավորող գործունակ և անկախ կազմակերպությունների գործունեության ավանդույթներ: Սա վերաբերում է նաև Հայաստանին, որն ավելի քան մեկ տասնամյակ գտնվելով շարունակական դատաիրավական բարեփոխումների շրջափուլում՝ համենայնդեպս հռչակել է իրավունքի գերակայության վրա հիմնված հասարակարգի, այդ թվում՝ մարդու հիմնական իրավունքների և ազատությունների լիարժեք պաշտպանությունն իրականացնելուն ունակ դատաիրավական համակարգի ստեղծման մտադրության մասին: Դատաիրավական ոլորտում մինչ այժմ իրականացված ինստիտուցիոնալ և օրենսդրական փոփոխությունները, կարծես, միտված էին հատկապես դրան, մանավանդ եթե հաշվի առնենք, որ ընդունված կարևորագույն օրենքներում, մասնավորապես ՀՀ սահմանադրության սկզբնական և փոփոխված տեքստերում, ամրագրված են այնպիսի դրույթներ, որոնք ուղղված են իրավունքի գերակայության ապահովմանը և մարդու հիմնական իրավունքների, ազատությունների և արժանապատվության պաշտպանությանը:

Այս առումով կարևոր է նաև Հայաստանի միանալը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի մի շարք կարևոր միջազգային կոնվենցիաներին, որոնք ինքնին դարձել են Հայաստանի ներպետական օրենսդրության բաղկացուցիչ մասը: Այս ամենով հանդերձ, եթե անաչառ հայացք ձգենք Հայաստանի ներկա դատաիրավական համակարգին ընդհանրապես և փաստաբանության ինստիտուտին մասնավորապես, ապա ակնհայտ կլինի, որ դրանք իրենց ներկա տեսքով, հատկապես քաղաքականություն ձևավորողների (որոշում կայացնողների) և իրականացնողների առումով, ի վիճակի չեն լիարժեքորեն իրականացնելու արդեն իսկ հռչակված և օրենսդրական ամրապնդում ստացած վերոնշյալ նպատակներն ու սկզբունքները:

1998թ-ից սկսած ներկուանգամ տեղի ունեցած օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունքում զգալի փոփոխություններ կրեց փաստաբանության համակարգը: Խորհրդային ժամանակաշրջանից ժառանգություն ստացած փաստաբանների կոլեգիայի համակարգը խորհրդային իրավական համակարգին հարիր կաղրերով չէր կարող իրականացնել այն խնդիրները, որոնք դրվում են իրավունքի գերակայության վրա հիմնված իրավական պետությունների փաստաբանության համակարգի առջև: Փոփոխությունների արդյունքում փաստաբանությունը հռչակվեց որպես անկախ համակարգ, որը կոչված է իրականացնելու իրավապաշտպան գործունեություն: Որոշակի ինստիտուցիոնալ զարգացումների արդյունքում ձևավորվեց փաստաբանների միասնական մասնագիտական կազմակերպությունը՝ Փաստաբանների պալատը, որն էլ կոչված է իր գործունեությամբ կայացնելու փաստաբանության ինստիտուտը՝ երկրի իրավապաշտպան համակարգի կարևոր մեխանիզմներից մեկը:

ՀՀ Փաստաբանների պալատի անդամ,
փաստաբան Դ. Արգարյան

Փաստաբանական պրակտիկա

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Վեճերի լուծման այլընտրանքային եղանակները հնարքների և մեթոդների համակցություն են, որոնք, որպես տվյալ պետության պաշտոնական դատական համակարգին այլընտրանք, կիրառվում են վեճերի լուծման նպատակով: Վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս հասնել իրավական բնույթի վեճերի արագ և արդյունավետ լուծման, նվազեցնել տնտեսավարող սուբյեկտների՝ դատական մարմիններում վեճեր լուծելու հետ կապված ֆինանսական ծախսերը, հեշտացնել կապը արդարադատության հետ, ապահովել մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետությունը և այլն: Վեճերի լուծման այլընտրանքային հիմնական մեթոդներն են.

ա) բանակցությունները (negotiation),
բ) միջնորդությունը (mediation),
գ) միջնորդ դատավարությունը (arbitration),
դ) փոքր դատավարությունը (mini-trial),
ե) անկախ փորձաքննությունը՝ գործի փաստական հանգամանքների պարզաբանման նպատակով (neutral expert fact-finding):

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

գործընթաց է, որի միջոցով վիճարկող կողմերը, առանց երրորդ անձանց մասնակցության, միմյանց հետ քննարկում են վեճը՝ ձգտելով հասնել փոխընդունելի համաձայնության: Բանակցությունների ամբողջ գործընթացը բաժանվում է հետևյալ փուլերի՝
ա) նախապատրաստություն բանակցություններին,
բ) ընթացակարգային համաձայնությունների կայացում,
գ) կողմերի ելույթներ,
դ) կողմերի շահերի պարզաբանում,
ե) օրակարգի ձևավորում,
զ) առաջարկությունների կատարում և քննարկում,
է) որոշման կայացում և համաձայնության ձևակերպում,
ը) բանակցությունների ավարտ:

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

չեզոք միջնորդի մասնակցությամբ բանակցությունների հիման վրա կողմերի միջև եղած վեճի լուծման գործընթաց է: Սա մի մեթոդ է, որի կիրառման ժամանակ կողմերն իրենք են կառավարում և ղեկավարում ինչպես գործընթացը, այնպես էլ դրա արդյունքում ծնված համաձայնությունը: Առանց կողմերի համաձայնության ոչինչ չի որոշվում: Միջնորդությանը բնորոշ են հետևյալ սկզբունքները՝ չեզոքություն, կամավորություն, կոնֆիդենցիալություն: Միջնորդությունը, որպես կանոն, ունի որոշակի փուլեր: Դրանք են՝
ա) նախաբան,
բ) կողմերի ներածական խոսքը,
գ) օրակարգի ձևակերպում,
դ) այլընտրանքային որոշումների առաջադրում,
ե) լուծման գնահատում և ընտրություն,
զ) համաձայնության կայացում:

ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

իրավական բնույթի վեճերի լուծման այլընտրանքային ձև է, որն իրականացվում է կողմերի կողմից ընտրված (նշանակված) ոչ պետական դատարանի կողմից՝ կողմերի կողմից, ինչպես նաև օրենքով կամ միջազգային պայմանագրով սահմանված կարգով: Կարող են ստեղծվել մշտապես գործող միջնորդ դատարաններ և կոնկրետ վեճը լուծող (ad hoc) միջնորդ դատարաններ: Մշտապես գործող միջնորդ դատարանները ստեղծվում են տարբեր կազմակերպություններին կամ հաստատություններին առընթեր: Միջնորդդատարանիհիմնադիրներըհաստատում են դրա կանոնադրությունը, միջնորդ դատավորների կազմը և այլ հարցեր: Կոնկրետ վեճի լուծման համար ստեղծված միջնորդ դատարանը ստեղծվում է կողմերի կողմից, բաղկացած է կենտ թվով ֆիզիկական անձանցից և վեճի լուծումից հետո դադարեցնում է իր գործունեությունը: Միջնորդ դատարանները քննության են առնում և լուծում են վեճը՝ կողմերի միջնորդ համաձայնության առկայության դեպքում:
Միջնորդ համաձայնությունը կարող է կնքվել ինչպես առանձին պայմանագրի (միջնորդ պայմանավորվածություն), այնպես էլ հիմնական պայմանագրում վերապահման (միջնորդ վերապահում) ձևով: Միջնորդ դատարանում գործի քննությունն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, քաղաքացիական դատավարության օրենսգրքի, «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի հիման վրա: Միջնորդ դատարանի վճիռը կատարվում է կամավոր: Սահմանված ժամկետում և կարգով վճիռը չկատարվելու դեպքում կողմն իրավունք ունի դիմել միջնորդ դատարանի գտնվելու վայրի առաջին ատյանի կամ տնտեսական դատարան՝ միջնորդ դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ ստանալու պահանջով:

ՓՈՔՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

տնտեսական վեճերի լուծման տարածված այլընտրանքային ձև է, որն այդպես է կոչվում դատական ընթացակարգերին ներքին նմանության պատճառով: Փոքր դատավարության դեպքում վեճը քննարկվում և լուծվում է վիճարկող կողմերի ղեկավարների, իրավաբանների և գործի քննությանը մասնակցող անկախ երրորդ անձի մասնակցությամբ, որը, որպես կանոն, փորձ ունեցող նախկին դատավոր է:

ԱՆԿԱԽ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

գործի փաստական հանգամանքների պարզաբանման նպատակով իրենից ներկայացնում է կողմերի կողմից համաձայնության կայացման մի ընթացակարգ, որը հիմնվում է գործի փաստական հանգամանքները ուսումնասիրած որակավորված մասնագետի եզրակացության վրա:

ՀՀ Քաղաքացիական գործերով Վերաքննիչ դատարանի նախագահի օգնական, իրավաբան Ա. Միրզոյան

ԱՅՑԵՔԱՐՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան հանդիսանում է բնակչության իրազեկության բարձրացման և մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում գործող հիմնական հասարակական կազմակերպություններից մեկը, որի առաքելությունն է ձևավորել կրթված, մասնագիտական բարձր կարողություններ ունեցող, նոր մտածելակերպի տեր իրավաբանների սերունդ, որի գործունեությունը մեծապես կնպաստի Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

ՀԵԻԱ-ի գործունեության հիմնական ուղղությունները

- Նպաստում է ՀՀ-ում բնակչության իրավական իրազեկության բարձրացմանը և մարդու իրավունքների պաշտպանությանը: ՀՀ բնակչությանը, մասնավորապես բնակչության անապահով խավերին անվճար հիմունքներով մատուցում է իրավաբանական ծառայություններ, որը իր մեջ ներառում է անվճար իրավաբանական բանավոր և գրավոր խորհրդատվության մատուցում, համապատասխան հայցադիմումների, բողոքների և այլ անհրաժեշտ փաստաթղթերի կազմում, իրավաբանական տեղեկատվության տրամադրում և տարածում տեղեկատվական թերթիկների, հեռուստա և ռադիոհաղորդումների, սեմինարների և հանդիպումների միջոցով, ինչպես նաև բնակչության որոշ խավերի համար դատական ներկայացուցչության իրականացում:
- Նոր սերնդի իրավաբանների մասնագիտական գիտելիքների բարձրացման, նրանց վերապատրաստման նպատակով նրանց համար կազմակերպում է ուսուցումներ, սեմինարներ, ինչպես նաև նրանց համար բացել է ժամանակակից իրավաբանական ռեսուրսներով հագեցած իրավաբանական ուսուցման և տեղեկատվության կենտրոններ:
- Աջակցում է ՀՀ դատական համակարգի բարեփոխումների իրականացմանը, մասնավորապես նպաստում է փաստաբանական համակարգի զարգացմանը և դատարանների աշխատանքի թափանցիկության հաստատմանը՝ նրանց գործունեության հանրայնացման միջոցով, ինչպես նաև օժանդակում է վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների զարգացմանը:

Իրականացված աշխատանքներ

ՀԵԻԱ-ն Հայաստանում գործող, մարդու իրավունքների պաշտպանության և բնակչության իրավական իրազեկության բարձրացման բնագավառում գործող այն եզակի ՀԿ-ներից է, որը Երևանում և ՀՀ մարզերում մշտապես գործող 7 գրասենյակներից բաղկացած ցանցի միջոցով վերջին մեկ տարվա ընթացքում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. մարդու հիմնարար և առօրյա իրավունքների ու դրանց պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ հրատարակել և բնակչության շրջանում բաժանել է շուրջ 100 անուն մատչելի տեղեկատվական թերթիկներ՝ յուրաքանչյուրից 5000 օրինակ տպաքանակով.
2. մարդու հիմնարար և առօրյա իրավունքների ու դրանց պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ վերջին մեկ տարվա ընթացքում վերապատրաստել է 150 կամավոր/դասավանդողներ, որոնք ՀՀ դպրոցներում, բուհերում և գյուղական համայնքներում անցկացրել են 420-ից ավելի հանրային իրազեկման սեմինարներ՝ մոտ 7500 մասնակիցների համար.
3. 2005թ.-ին ՀԵԻԱ-ի իրավաբանական ռեսուրսներից ընդհանուր առմամբ օգտվել են 5183 մարդ, որից 3855 մարդ կամ ընդհանուրի 74.37%-ը՝ իրավաբանական գրականությունից, 1328 մարդ կամ ընդհանուրի 25.63%-ը՝ ՀՀ օրենսդրության էլեկտրոնային համակարգից և մյուս ծառայություններից (համակարգչային տեխնիկա, ինտերնետ).
4. 2005թ.-ի ընթացքում բնակչության սոցիալապես անապահով խավերի համար ՀԵԻԱ-ի գրասենյակների կողմից մատուցվել են անվճար իրավաբանական խորհրդատվական և դատական ներկայացուցչության ծառայություններ, որոնցից օգտվել են ընդհանուր առմամբ 5742 անձինք: Շուրջ 50 անձանց խախտված իրավունքների պաշտպանության համար իրականացվել է դատական ներկայացուցչություն:

Անցած մեկ տարվա ընթացքում ՀԵԻԱ-ի կողմից վարվող հիմնական դատական գործը եղել է նախազգուշական գործադուլ իրականացրած «ԱրմենՏել» ընկերության Ինֆորմացիոն տեխնոլոգիաների գլխավոր տնօրինության չորս բաժինների շուրջ 50 աշխատակիցների իրավունքների դատական պաշտպանության գործը, որի վերաբերյալ նյութը կտպագրվի իրավաբանական լրատուի հաջորդ համարներից մեկում:

«Իրավաբանական լրատու»-ի խմբագիր
Ն. Կարապետյան

Իրավունքների պաշտպանություն

ՋԵՍԱՓԻ ԱՆՎԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹ

Ֆիլիպ Ջեսափի անվան մրցույթը հիմնադրվել է 1959թ.-ի գարնանը՝ Հարվարդի, Կոլումբիայի և Վիրջինիայի համալսարանների միջազգային իրավաբան ուսանողների կողմից, որոնք հավաքվել էին Միջազգային իրավունքի ամերիկյան ընկերության (American Society of International Law, ASIL) ամենամյա հանդիպմանը: Իրավաբան ուսանողները,միջազգայինիրավունքիբնագավառումիրենց գիտելիքներն ու հմտությունները զարգացնելու նպատակով կազմակերպել էին միջազգային փաստաբանական մրցույթ, որի ընթացքում պետք է ներկայացվեին արդիական թեմաներով գրավոր ու բանավոր փաստաբանական ելույթներ և բանավիճեին ՍԱԿ-ի միջազգային դատարանի օրինակով:

1959թ. մայիսի 3-ին Հարվարդի համալսարանում կայացավ Ջեսափի առաջին մրցաշրջանը, որը ներհամալսարանական էր և կոչվում էր «Միջազգային իրավունքի դատախաղ»: Առաջին միջհամալսարանական մրցույթը տեղի ունեցավ 1961-ին՝ Կոլումբիայի համալսարանում: 1963թ.-ին դատախաղ-մրցույթը վերանվանվեց ի պատիվ Արդարադատության միջազգային դատարանի դատավոր Ֆիլիպ Ջեսափի և սկսվեց կոչվել մեզ հայտնի անունով: Հետագա տարիներին մրցույթը միջազգայնացվեց և զարգացավ՝ դառնալով միջազգային իրավունքի ամենախոշոր և հեղինակավոր բանավիճային մրցույթն աշխարհում: Այն մեծ հնարավորություն է իրավաբան ուսանողների համար՝ առավել մանրամասն ծանոթանալու միջազգային իրավական ակտերին և սովորութային իրավունքին, դրանց կիրառման առանձնահատկություններին՝ հաշվի առնելով տարբեր իրավական համակարգերի յուրահատկությունները, զարգացնելու իրենց գրավոր և բանավոր փաստաբանական հմտությունները:

ՋԵՍԱՓԻ ՄՐՑՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի ծրագիրը Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց 2000թ. նոյեմբերի 1-ին՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի իրավական նախաձեռնության հայաստանյան գրասենյակի կողմից: Սկսած 2004-թ.-ից՝ «Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլը կազմակերպվում է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից՝ Հայաստանի իրավաբանական հիմնադրամի և «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության հետ համատեղ՝ բազմաթիվ գործընկերների ու կամավորների անշահախնդիր օգնությամբ: Կազմակերպիչները անընդհատ աշխատում են մրցույթի համար Հայաստանում լավ ավանդույթի ձևավորման ուղղությամբ, քանզի մրցույթը մեծ ներդրում է երիտասարդ իրավաբանների նոր սերնդի մասնագիտական կրթության գործում:

ՋԵՍԱՓԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՓՈՒԼ

Մրցույթի միջազգային մրցափուլը բաղկացած է 4 նախնական, ընտրական և եզրափակիչ մրցափուլերից: Նախնական փուլերի արդյունքում առաջին 16 թիմերը տեղափոխվում են մրցույթի ընտրական մրցափուլեր: Դրանցում հաղթող ութ թիմերը մրցում են քառորդ եզրափակիչում, որից չորս թիմեր անցնում են կիսաեզրափակիչ: Ի վերջո, երկու լավագույն թիմերը հանդիպում են եզրափակիչ՝ Ջեսափի աշխարհի գավաթի խաղարկության փուլում: Ջեսափի մրցույթի աշխարհի գավաթի հաղթող ճանաչված թիմը հռչակվում է Ջեսափի աշխարհի գավաթի չեմպիոն:

2001թ.-ից Հայաստանի Հանրապետության բուհերը մասնակցում են Ջեսափի մրցույթի միջազգային մրցափուլին: Հայաստանում մրցույթի հիմնադրման առաջին տարում հայաստանյան մրցափուլի հաղթող ճանաչվեց Երևանի մենեջմենթի համալսարանի Գյումրու կրթահամալիրի իրավաբանական ֆակուլտետի թիմը, որը Վաշինգթոնում կայացած միջազգային մրցափուլում 69 թիմերի շարքում զբաղեցրեց 60-րդ հորիզոնականը: 2002, 2003 և 2004 թվականներին ազգային մրցափուլերում հաղթող ճանաչված ԵՊՀ Իրավաբանական ֆակուլտետի թիմը 2002թ. միջազգային մրցափուլում 75 թիմերի շարքում գրավեց 72-րդ տեղը, 2003թ.-ին՝ 83 թիմերի շարքում 50-րդն էր, իսկ 2004թ.-ին՝ 92 երկրների շարքում 54-րդն էր: 2005 և 2006 թվականների հայաստանյան մրցափուլի հաղթող ճանաչված Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանը ներկայացնող թիմը միջազգային մրցափուլում 2005թ.-ին 103 թիմերի շարքում զբաղեցրեց 80-րդ տեղը, իսկ 2006թ.-ին 99 թիմերի շարքում զբաղեցրեց 89-րդ տեղը:

Ջեսափի ակումբի համակարգող
Ա. Եղիկյան

ՄԱՍՆԱԳԵՏԻ ՏԵՍԱԿԵՏ

ՓԱՍՏԱԲԱՆ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ներկայումս կիրառվող դատական պրակտիկայում շատ հաճախ փաստաբանը բախվում է մի խոչընդոտի, որը կապված է քաղաքացիական դատավարությունում կիրառվող դատական ներկայացուցչության ինստիտուտի կիրառման հետ, և որի հետևանքով ոչ միայն ոտնահարվում են փաստաբանի իրավունքներն ու օրինական շահերը, այլ արժեզրկվում է փաստաբանության ինստիտուտը:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ պարբերության՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, իսկ համաձայն 20-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք:

Նշված դրույթների իրականացումը, որպես որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխիք, կոչված է ապահովելու նաև փաստաբանությունը: Այն հանդիսանում է յուրաքանչյուր ժամանակակից իրավական պետության իրավապաշտպան համակարգի կարևոր և բաղկացուցիչ մասնիկը: Պատահական չէ, որ դեռևս հին հռոմեական իրավունքում գոյություն ուներ «Advocatus Legum Miles» լատիներեն արտահայտությունը, որը նշանակում է «Փաստաբանը իրավունքի զինվորն է»:

Այսպես, քաղաքացիական դատավարությունում փաստաբան-ներկայացուցչի դատավարական լիազորությունները սահմանվում են ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ, 41-րդ, 42-րդ, 28-րդ հոդվածներով, ինչպես նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 17-րդ, 18-րդ հոդվածներով:

Համաձայն ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի՝ դատարանում ներկայացուցիչ կարող է լինել ցանկացած քաղաքացի, որն ունի դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն, իսկ նույն օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ փաստաբանի լիազորությունները հաստատվում են օրենքով սահմանված կարգով: Փաստաբանի լիազորությունների՝ օրենքով սահմանված լինելու հանգամանքն էլ հաստատվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ ՀՀ Փաստաբանների պալատի կողմից տրված փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագրով: Վերը նշված դրույթներից հստակ է դառնում, որ ներկայացուցիչը քաղաքացիական դատավարությունում մասնակցում է միայն պատճաշ ձևակերպված լիազորություն ունենալու դեպքում, իսկ փաստաբան-ներկայացուցչի դեպքում՝ այն փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիրն է: Այն հնարավորություն է ընձեռում փաստաբանին իրականացնել միայն այնպիսի դատավարական գործողություններ, որոնք կապված չեն վստահորդի նյութական իրավունքների տնօրինման հետ: Իհարկե, արտոնագրի առկայությունը բավարար չէ, եթե փաստաբան-ներկայացուցիչը պետք է օգտվի ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածով սահմանված լիազորություններից, որոնց համար նա պետք է ունենա նաև պատճաշ ձևակերպված լիազորություն՝ լիազորագիր:

Այսպիսով, իմ կարծիքով, վերը նշված օրենսդրական ձևակերպումները չեն արգելում փաստաբան-ներկայացուցչին դատարանում հանդես գալ արտոնագրով՝ առանց լիազորագրի, եթե վստահորդը նրա կողքին է: Նշված կարծիքին են նաև հայտնի ռուս իրավաբան գիտնականներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ա. Ժիլինը, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Վլասովը:

Սակայն կիրառվող դատական պրակտիկայում կան դատարաններ, մասնավորապես ՀՀ Տնտեսական դատարանը, որոնք, անկախ այն հանգամանքից, որ դատական նիստում փաստաբան-ներկայացուցիչը հանդես է գալիս վստահորդի հետ միասին, փաստաբան-ներկայացուցչից պահանջում են նաև վստահորդի կողմից տրված լիազորագիր՝ անտեսելով փաստաբանական արտոնագիրը և արգելելով փաստաբան-ներկայացուցչին դատական նիստում օգտվելու օրենքով իրեն վերապահված դատավարական իրավունքներից: Եթե նման տրամաբանությամբ շարժվենք, ապա փաստաբանական արտոնագիրը կորցնում է իր իրավաբանական նշանակությունը՝ դրանով իսկ արժեզրկելով փաստաբանական ինստիտուտը: Փաստաբանի կողմից նման խնդրի հետ բախումը հնարավորություն չի տալիս նրան լիարժեք իրականացնելու այն, ինչին կոչված է փաստաբանությունը ամբողջ աշխարհում, քանի որ փաստաբանն է աջակցում հասարակության մեջ իրավունքի գերակայության ամրապնդմանը, իրականացնում օրինականության քարոզչություն՝ մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու և միջազգային հանրաճանաչ նորմերը ամրապնդելու ուղղությամբ:

Իմ կարծիքով, նշված խնդրի արդիականությունն ու կարևորությունը կայանում է նաև նրանում, որ որոշ դատարանների կողմից ցուցաբերվող նման վերաբերմունքով ոչ միայն չի ապահովվում ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 20-րդ հոդվածներով երաշխավորված մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, այլև խախտվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը և մրցակցության սկզբունքը:

Ուստի, վերոնշյալ խնդրո առարկայի օրենսդրորեն ճիշտ կիրառումը ապահովելու համար, կարծում եմ, անհրաժեշտ է դրա պաշտոնական պարզաբանումը ՀՀ Դատարանների նախագահների խորհրդի կողմից՝ այդ ոլորտում միասնական դատական պրակտիկայի կիրառումը ապահովելու համար:

Օրենսդրություն

ՀՀ Փաստաբանների պալատի անդամ,
փաստաբան Լ. Հարությունյան

ՀԱՄԱՌՈՏ ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԻՐԱՎԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ

(ՄԱՍ ԱՌԱՋԻՆ)

Թեև Միացյալ Թագավորությունում գործում է մեկ կենտրոնացված կառավարություն, այնուամենայնիվ, առկա են տարբեր իրավական համակարգեր: Հյուսիսային Իռլանդիայում և Շոտլանդիայում օրենսդրությունը, իրավական և դատական համակարգերը, ինչպես նաև իրավաբանի մասնագիտությունը տարբերվում են Անգլիայում և Ուելսում գործող համակարգերից:

Իրավաբանի մասնագիտությունը Անգլիայում և Ուելսում

Անգլիայում և Ուելսում իրավաբանի մասնագիտությունը բաժանվում է երկու հիմնական ճյուղերի՝ սոլիսիթորներ և բարիսթերներ:

Սոլիսիթորը փաստաբան է, որը իրավական բոլոր հարցերով խորհրդատվական ծառայություններ է մատուցում վստահորդներին, նախապատրաստում է գործերը՝ բարիսթերների կողմից բարձր ատյանի դատարաններում ներկայացնելու համար, հանդես է գալիս ստորին ատյանի դատարաններում:

Սոլիսիթորների մասնագիտությունը սկիզբ է առնում 12-րդ դարից, երբ անգլիական դատարանների լեզուն ֆրանսերենի նորմանական ձևն էր և դատավարության մասնակիցները որպես թարգմանիչ հանդես եկող ներկայացուցչի կարիք ունեին: Այդ ներկայացուցչիները կարող էին նաև դատարանում հանդես գալ վստահորդի անունից: Նրանք հայտնի էին որպես հավատարմատարներ և ներկա սոլիսիթորների նախատիպն էին: Այս մասնագիտությունը երկար ժամանակ օրենդրական կարգավորման չէր ենթարկվում՝ մինչև 19-րդ դարի սկզբին Իրավաբանների միության (The Law Society) ստեղծումը: 1845 թ.-ին Թագավորական հրամանով հաստատված կանոնադրությամբ Իրավաբանների միությունը իրավունք ստացավ ներդնել կրթության և վարքագծի կանոնների ազգային ստանդարտներ: Մոտավորապես նույն ժամանակ էլ «փաստաբան» տերմինը սկսեց դուրս մղվել հօգուտ «սոլիսիթոր» տերմինի: Հետագայում պառլամենտի կողմից ընդունվեցին տարբեր ակտեր, որոնցով իրավաբանների միության իրավասությունները ընդլայնվեցին:

Սոլիսիթորները, ունենալով մասնագիտական կրթական բարձր որակներ, կազմում են Անգլիայի և Ուելսի փաստաբանների մեծամասնությունը և իրականացնում են վստահորդների մեծամասնության գործերի վարումը: Սոլիսիթորներին միավորող մասնագիտական կազմակերպությունը Անգլիայի և Ուելսի Իրավաբանների միությունն է, որին անդամակցում են Անգլիայի և Ուելսի ավելի քան 66.000 սոլիսիթորները: Բոլոր սոլիսիթորները իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնում են՝ առաջնորդվելով Իրավաբանների միության վարքագծի կանոններով: Իրավաբանների միության ղեկավար մարմինը 75 հոգուց բաղկացած խորհուրդն է:

Սոլիսիթորների գործունեության հիմնական ուղղությունը վստահորդներին (մասնավոր անձինք, տնտեսական ընկերություններ, արտասահմանյան հաճախորդներ և այլն) իրավաբանական ծառայությունների մատուցումն է՝ ներառյալ ներկայացուցչությունը դատարանում: Մինչև վերջերս սոլիսիթորները կարող էին իրենց վստահորդների շահերը ներկայացնել միայն ստորին օղակների դատարաններում, սակայն օրենսդրական փոփոխությունների շնորհիվ նրանք արդեն կարող են դա անել նաև բարձր դատական ատյաններում:

Մասնավոր գործունեություն (պրակտիկա) - Սոլիսիթորների գրեթե 90%-ը զբաղվում է մասնավոր գործունեությամբ՝ որպես անհատ (sole practitioner) կամ այլ սոլիսիթորների հետ ընկերություն ստեղծելով (partnership): Անհատ սոլիսիթորները ունեն իրենց ֆիրմաները և միայնակ են տնօրինում և կառավարում այն: Իրավաբանական ընկերություններում կառավարումը վերահսկվում է գործընկեր (բաժնետեր) սոլիսիթորների կողմից: Նրանք հաճախ ունենում են այլ սոլիսիթորներից բաղկացած մեծ աշխատակազմ, երբեմն նաև օտարերկրյա փաստաբաններ: Մինչև վերջերս իրավաբանական ընկերություն կարող էին ստեղծել միայն սոլիսիթորները, սակայն 1992 թ.-ի օրենսդրական փոփոխությունները թույլ տվեցին, որպեսզի իրավաբանական ընկերություններում որպես գործընկեր ներգրավվեն նաև այլ երկրներում իրավաբանական կրթություն և փաստաբանի որակավորում ստացած անձինք: Ներկայումս Անգլիայում և Ուելսում կան գրեթե 10.000 իրավաբանական ֆիրմաներ, որոնք գործում են ամբողջ երկրով մեկ բացված 14.000 գրասենյակների միջոցով: Որոշ ֆիրմաներ իրենց գրասենյակներն ունեն նաև այլ երկրներում, մասնավորապես Եվրոպայում, ԱՄՆ-ում, Մերձավոր Արևելքում և Հեռավոր Արևելքում, որտեղ նրանք խորհրդատվություն են մատուցում միջազգային և անգլիական իրավունքի վերաբերյալ:

Իրավաբանական ընկերությունները, որպես կանոն, ունեն մինչև 4 գործընկեր սոլիսիթորներ (բաժնետերեր), սակայն ներկայումս տենդենց կա դեպի ավելի մեծ ընկերությունների կազմավորումը, որը հիմնականում պայմանավորված է օրենսդրության ավելի բարդանալու և նեղ մասնագիտացման կարիքի հետ: 20 գործընկերներով ընկերությունները արդեն դառնում են սովորական, իսկ մեծ ընկերությունները ունեն ավելի քան 100 գործընկեր:

Անգլիայի և Ուելսի յուրաքանչյուր քաղաքում կան սոլիսիթորների գրասենյակներ, որոնք հանդիսանում են առաջին կետը իրավաբանական խորհրդատվության կարիք ունեցող անձանց համար, ներառյալ այնպիսի հարցերով, որոնք շատ երկրներում լուծվում են նոտարների կողմից, օրինակ՝ անշարժ գույքի գործարքներ, ժառանգության հարցեր և այլն:

ՀՀ Վճռաբեկ դատարանի դատավորի օգնական,
իրավաբան Լ. Արգարյան

Միջազգային պրակտիկա

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Գերմանացի եպիսկոպոս Իոհան Ֆուգգերը մահվան շեմին կազմել էր կտակ, որով խնդրել է ամեն տարի իր շիրիմի վրա լցնել գինով լի տակառը այնպես, որ «իր մարմինը կարողանա ներծծել այդ անուշահամ հեղուկը»: Այդ նպատակի համար քաղաքացին մեծ գումարներ է թողել:

- Սա ի՞նչ հիմարություն է, - լսափողի մեջ գոռում էր դատավորը: - Ձեր կեղտոտ թերթը իմ մասին հսկայական կույտ սուտ է տպագրել:
- Ինչու՞ եք այդքան անհանգստանում, ձերդ արժանապատվություն, - արդարանում է խմբագիրը, - ավելի վատ կլիներ, եթե մենք ձեր մասին գրեինք ճշմարտությունը:

- Դուք գողությունը կատարել եք ճիշտ այնպես, ինչպես ես ձեզ նկարագրեցի: Այդպես է, չէ՞:
- Ոչ, պարոն դատավոր, բայց հաջորդ անգամ ես կօգտագործեմ ձեր մեթոդը:

- Վստահորեն քեզ առաջարկում եմ այդ փաստաբանին:
- Կարծում ես նա կարո՞ղ է ինձ ազատել մեղադրանքից:
- Էն էլ ոնց: Վերջերս ինձ շուն էր կծել, ես հայցադիմում գրեցի տիրոջ դեմ, որի պաշտպանն էր այդ փաստաբանը: Եվ պատկերացրեք՝ նա կարողացավ ապացուցել, որ ես եմ շանը կծել:

«Ազատության պողոտայում ապրում են երկու պարազիտներ, մայր և աղջիկ, որոնք երկուսն էլ աբուհարզանից հետո ստանում են էլեմենտ:
(հայտարարությունից)

«Գառի սատկելու դեպքում նրա արժեքը գանձել նրա տիրոջից, որի քաշը 45 կիլոգրամ է»:
(դիմումից)

ՀԽՍՀ-ում նորածիններին անուններ շնորհելու գործում իր ազդեցությունն է ունեցել բազմանդամ ընտանիքներում երեխաների թիվը սահմանափակելու ցանկությունը (Բավական, Հերիք), դժվարությամբ օջախում երեխա ծնվելու հանգամանքը (Խաչատուր, Ասատուր, Աստվածատուր), օտար լծի առկայությունը և ազդեցությունը (Յոլդաշ, Յուզբաշ), սոցիալիստական պայմաններում նոր հասկացությունների երևան գալը (Բրիգադիր, Ագիտացիա), իհարկե, նաև երեխային անուն տալու կարևոր գործում քաղքենիական մոտեցումը (Շիվռոլետ), երբեմն նաև անվան իմաստը չհասկանալը (Դիզենտերիա, Կանալիզացիա, Սպիրալ) և այլն:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Հեռ.՝ (374 10) 54-01-99
ֆաքս՝ (374 10) 58-02-99
Էլ.փոստ՝ legalnewsletter@ayla.am

Լրատվական գործունեություն իրականացնող՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ

Հասցե՝ ք. Երևան,
Նալբանդյան 7, բն. 2

Պետական գրանցման վկայականի համարը՝

03Ա 057970, տրված՝ 27.12.2002 թ.

Թողարկման պատասխանատու և խմբագիր՝
Նարինե Կարապետյան

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒՆ»
ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

Տպաքանակը՝ 500 օրինակ
Ծավալը՝ 1 տպ. մամուլ
Ստորագրված է տպագրության 30.06.2006թ.